ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն՝**

   Դիանա Լեոնիդի

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ շահերի պաշտպանության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Նիդերլանդների Թագավորություն, Հաագա, 2025թ. հունվարի 20-24-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Եվրոպայի խորհուրդ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Գործուղման նպատակն էր Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում կազմակերպվող ճանաչողական այցին ապահովել Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի մասնակցությունը՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության լավագույն փորձն ուսումնասիրելու համար:

6. **Քննարկված թեմաները՝**

   Այցի ընթացքում քննարկվել են զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման մեխանիզմները, զինված ուժերում քրեական իրավախախտումների քննության, զինծառայողների իրավունքների պաշտպանության ներքին և արտաքին մեխանիզմները, զինված ուժերում կանանց պաշտպանության, խտրականության, ոտնձգությունների դեմ պայքարի և

զինվորական ծառայության մեջ նրանց ավելի լայն ներգրավվածության խթանման հիմնական թեմաները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Այցի ընթացքում հանդիպումներ են կայացել Նիդերլանդների Թագավորության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի, Ռազմական և Ազգային օմբուդսմենների գրասենյակների, Վետերանների ինստիտուտի անձնակազմերի, Նիդերլանդների Թագավորության զինվորական դատարանի դատավորի, զինվորական դատախազության, ռազմական ոստիկանության ներկայացուցիչների, Միջազգային քրեական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ներկայացուցչի ազգային գրասենյակի անձնակազմի հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացուցիչները ներկայացրել են Նիդերլանդների Թագավորության պաշտպանության նախարարության համակարգի տարբեր ստորաբաժանումների կառուցվածքը, գործառույթներն ու հիմնական խնդիրները: Ներկայացվել է Նիդերլանդների Թագավորության զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության լավագույն փորձը, ինչպես նաև այդ ուղղությամբ գործող հիմնական ռազմավարությունները, աշխատանքներն ու առկա մարտահրավերները:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

27 հունվարի 2025թ.